ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրի համայնք,
ք. Եղվարդ, Երևանյան 1, Հեռ. (0224) 2-11-10, nayiri.kotayq@mta.gov.am, eghvard.city@gmail.com

N Ե-2150
17հունիս 2024թ.

«ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Ա. ԽԱԼԱԹՅԱՆԻՆ

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

(Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին)

Նաիրիի համայնքապետարանի և <<ԻՆԺԵՆԵՐԻՆԳ>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 2024թվականի ապրիլի 26-ին կնքված N <<ԿՄՆՀ-ԳՀԽԾՁԲ-24/7>> ծածկագրով ծառայությունների մատուցման գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Նաիրի համայնքի փողոցների ճաքերի մշակման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Համաձայն իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյան՝ **2016թվականի հուլիսի 8-ից Ընկերության տնօրեն է հանդիսանում Արման Հայրապետի Խալաթյանը:**

Միևնույն ժամանակ **Արման Հայրապետի Խալաթյանը 2020թվականի դեկտեմբերի 1-ից մինչ օրս հանդիսանում է նաև <<ՀՏ-ՊՐՈԵԿՏ>> ՍՊԸ-ի տնօրեն և բաժնետեր, իսկ <<ՀՏ-ՊՐՈԵԿՏ>> ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 00229138) 2022թվականի հունիսի 22-ից մինչ 2024թ. հունիսի 22-ը** (17.12.2022թ.-11.05.2023թ. հանվել է ցանկից՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի ԵԴ/32833/02/22 որոշման հիման վրա) ներառված է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերության տնօրեն **Արման Հայրապետի Խալաթյանը և <<ՀՏ-ՊՐՈԵԿՏ>> ՍՊԸ-ի միջև առկա է փոխկապակցվածություն:**

Այսպիսով՝ <<Գնումների մասին >> օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, **գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:...**

Համաձայն ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 119-րդ կետի 2-րդ ենթակետի՝ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրության իմաստով՝ **ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված,** եթե նրանք գործել են

համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

ա) տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին տնօրինող մասնակից,

բ) ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ,

գ) տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացվող կոլեգիալ մարմնի նախագահ, անդամ,

դ)իրավաբանական անձի այնպիսի աշխատակից, որը աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների ընդունման հարցում որևէ էական ազդեցություն ունի:,,,

Ընդ որում Կարգի 121-րդ կետի համաձայն՝ մասնակցի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցելու իրավունքի սահմանափակմանը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Պայմանագիրը ենթակա է լուծման համաձայն Պայմանագիր 7.3 կետի.

<<Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչվելու մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը,իսկ վերջինս պարտավոր է ՀՀ օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասների այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է>>:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ <<Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ <<Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մել այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերը իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը>>:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի3-րդ մասի համաձայն՝ <<Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համարվում է լուծված կամ փոփոխված>>:

Հաշվի առնելով Պայմանագրի 7.3 կետը և ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով՝ Պատվիրատուի միակողմանի ամբողջությամբ լուծում է պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները

սահմանված կարգով կներկայացվեն Ընկերության սպասարկող բանկ՝ բանկային երաշխիքների գումարները գանձելու նպատակով:

<<Գնումների մասին>> օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացնելու հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնկցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ատանալու հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշումն բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝տվյալ դատական գործի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքում որոշման կատարման հնարավորությունն չի վերացել:

Ընդ որում, եթե՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիր կնքած անձը վճարել է պայմանագրի որակավորման և կատարման ապահովման վերը նշված գումարը (Նաիրիի համայնքապետարանի 900112101275 հաշվետամարին), ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիավորված մարմնին.

- մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմնին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ

Կատ. ՝ Վ. Վիրաբյան
0224 2-20-24